ոմն Յերժքո անուն զոր եկաւ, և հրամանաւ Թագաւորին հանին ի դաշտն. և առաջի չաւուշին գլխատեցին զնոսա. զոր չաւուշն տեսաւ աչօք իւրովք. և էին Թուով իբրեւ 33, ի մի ժամ գլխատեցին զնոսա։ Եւ 26 Թօփք զոր բերեալ էին ի Պէնտէրէն, հրամանաւ Թագաւորին դարձուցին չաւուշին, զոր առեալ տարաւ զնոսա։

1584. Թվ. ՌԼԳ. Թագաւորն Ստեփանոս հրամայեց, զի Զպորովսքին զՍամուէլն գլխատեցին. քանզի այս Զպորովսքին մեծ իշխանին որդի էր, որ էր երկրորդ Թագաւորին, և վասն ապիրատ գործոյն իւրոյ զոր գործեալ էր, այսինքն զոմն մեծ իշխան սպանեալ էր, և այլ ընդդէմ Թագաւորին հրամանացն հակառակ կայր, և էր անհնազանդ ամենեցուն։ Վասն այն պատճառի կալան զնա, և ըստ արժանեաց նորա սպանեցին՝ գլխատելով ի Քրաքոմն. և եղեւ հիացումն մեծ. զի որչափ Թագաւորն առ իւր կոչէր պատգամաւ իւրով, ոչ ինչ համարէր և նախատէր զԹագաւորն. և յորժամ կամեցաւ Աստուած զչարիսն իւր հատուցանել նմա, յիմարեցոյց զնա. զոր և ոտիւքն տարաւ զգլուխն իւր առ ոտս Թագաւորին. և այսպէս չարն չարաւ կորեաւ։

1586. Թվ. ՌԼԵ. Կամենից քաղաքիս եպիսկոպոս վաղջանեցաւ Գժօնծ Մարձին Օբաթ–մօկսիլսքիյ. ութ ամ կալաւ զաթոռ եպիսկոպոսութեան, և փոխեցաւ առ Աստուած. բայց լաւ և բարի ոմն էր, հեզ և խաղաղարար և բարերար առ ազգս Հայոց. զոր Տէր Աստուած դասակից և պսակակից արասցէ ընդ ամենայն սուրբ հայրապետացն. ամէն։ Եւ ի նոյն ամին վաղճանեցաւ Սրօջինսքիյ մեծ ոմն իշխան. և ի սոցա երկոցունց Թաղմանն՝ զմեզ զՀայքն մեծարանօք կոչեցին. զոր և գնացաք շուրջառով և խաչերով. բայց մեծ հակառակութիւն արարին ընդ մեզ տգէտ և ամբարտաւան ազգն Ըռուզ. բայց ամօթալից դարձան իւրեանց սովորական տեղն, որպէս յերեկն և յեռանդ ունէին զկարգն և զսահմանքն։

1586. Թվ. ՌԼԵ. Տէր Դաւիթ կաթողիկոսն Նստաւ. և զՏէր Գրիգոր վարդապետն՝ որ էր Անկուրիոյ քաղաքին աթոռակալ, այս Ֆռանգաց աշխարհս նուիրակ ուղարկեց, որ և եկաւ ի Կամինիցս, և նուիրկցեց, և զժողովուրդն հաւանեցոյց քարոզիւ և աստուածային բանիւ. վասն որոյ մեծաւ պատուով ընդունեցին և մեծարեցին, և բազում սիրով զինքն ուղաւորեցին ի ճանապարհն իւր։

1586. ՌԼԵ. Ոմն մեծ իշխան որ էր Թագաւորին քանձլեր, այսինքն մոհրտար (կնքապահ), և շինեաց իւր անուան վերայ քաղաք մի, և եդ զանուն քաղաքին Զամոյսց. քանզի և ինքն այս իշխան Զամոյսքիյ կոչէր. և անդ կոչեաց զՀայ ազգն, ով ոք կամիցի երթալ և բնակել ի անդ. և էր հեռագոյն ի Լովէն իբրեւ 15 մղոնաւ. զոր և գնացին փոքր ի շատէ, նոքա որ էին եկք և օտարք Հայոց տանէն. և մեծ երախտիք արար նոցա, շնորհելով ամե-